

**ՀՊԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ**

Բանայի բառեր – հպականների քառաշարք և եռաշարք համակարգեր, կատկայինների տեսություն, ընդհանուր հնդեվրոպական լեզու, ձայնեղների/չնչեղ ձայնեղների կարգ, խուլերի/չնչեղ խուլերի կարգ

Հնդեվրոպական համեմատական լեզվաբանության շուրջ երկուհարյուրամյա պատմության ընթացքում արձանագրվել են շրջադարձային նշանակության բացահայտումներ, որոնք էապես խթանել են հնդեվրոպական լեզվաբանության ընթացքը՝ նրա համար կանխորոշելով տասնամյակների զարգացման նոր հուն: Այդպիսի առաջին բացահայտումը գերմանական «բաղաձայնների տեղաշարժի» մասին դրույթի ձևակերպումն էր Յ. Գրիմի կողմից, որն ստացել է «Գրիմի օրենք» անվանումը¹: Ընդհանուր հնդեվրոպական նշանակություն են ունեցել

- ✓ «հնչյունական օրենքի» ըմբռնումը, որը ձևակերպեցին երիտքերականները,
- ✓ հ.-ե. նախալեզվում կոկորդային հնչյունների գոյության կանխադրումը («կոկորդայինների տեսություն»/«ларингальная теория») Ֆ. դը Սոսյուրի կողմից դեռևս իր գիտական գործունեության նախաշեմին («Նկատառումներ հնդեվրոպական լեզուներում ձայնավորների նախնական համակարգի մասին»/«Mémoire sur le système primitif de voyelles dans les langues indo-eropéennes», 1879), որն իր ամբողջացնող ձևակերպումն ստացավ շուրջ հիսուն տարի անց 1927 թ., Ե. Կուրիլովի կողմից՝ խեթերենի նյութի հիման վրա,
- ✓ թռխարական և խեթա-լուվական լեզուների հ.-ե. բնույթի հաստատումը XX դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում և այլն:

¹ Գերմանական լեզուներում «բաղաձայնական տեղաշարժերի» մասին առաջին դիտարկումները հանդիպում են Ռ. Ռասկի «Հին հյուսիսային կամ իսլանդերեն լեզվի ծագման ուսումնասիրություններ» (1818) աշխատության մեջ, որին Յ. Գրիմը ծանոթացել էր, «երբ ավարտել էր իր «Քերականության» առաջին հատորի նախապատրաստումը հրատարակության» (1819), բայց դրանք միայն առանձին դիտարկումներ էին, որոնք բավարար չեն «Ռասկի միասնական և ամբողջական օրենքի մասին խոսելու» համար (տե՛ս **Прокош Э.**, Сравнительная грамматика германских языков, М., 1954, с. 38): Ըստ Պոռկոշի՝ «Գրիմի ծառայությունն այն է, որ նա սահմանեց տեղաշարժի տարբեր գործընթացների միջև գոյություն ունեցող ներքին կապը: Նա առաջինը կարողացավ միասնական օրենքի մասին թե՛ գ առաջադրել, որը միավորում է տեղաշարժի բոլոր փուլերը» (նույն տեղում):

Որոշ բացահայտումներ վերաբերում էին առանձին լեզվաճյուղերի կամ լեզուների, ինչպես, օրինակ,

- ✓ Ն. Հյուբշմանի կողմից հ.-ե. լեզվաընտանիքում հայերենի տեղի ճշտումը (1875),
- ✓ Վեռների օրենքը (1877), ըստ որի՝ գերմանական «բաղաձայնների առաջին տեղաշարժով» (Գրիմի օրենք) ընդհանուր գերմանականում առաջացած $f(<*p)$, $p(<*t)$, $h(<*k)$, $s(<*z)$ խուլ շփականները ձայնեղների միջավայրում ձայնեղանում են (հմմտ. $f>Ֆ$, $p>ժ$, $h>Յ$, $s>z(>r)$),
- ✓ գերմանական բաղաձայնների երկրորդ կամ «վերին գերմանական» տեղաշարժի բնորոշումը որպես հնչյունափոխական նեղ գերմանական ոչ բոլոր լեզուներն ընդգրկող երևույթ,
- ✓ Բարթոլոմեի օրենքը հնդ-իրանական լեզուներում ընդհանուր արիական *p, *t, *k շնչեղ խուլերի՝ նախորդող *b, *d, *g շնչեղ ձայնեղներին նմանվելու մասին (1885) և այլն:

Ինչպես նշված, այնպես էլ այդ շրջանի մյուս բոլոր հայտնագործություններն արվել են պատմահամեմատական մեթոդով կատարված հետազոտությունների հիման վրա: Միաժամանակ, յուրաքանչյուր նոր բացահայտում հերքել կամ հարցականի տակ է դրել մինչ այդ շրջանառվող, ավելին՝ ամրագրված առանձին տեսակետներ ու գաղափարներ, որոնցից էին, օրինակ, հ.-ե. լեզուների երկու մեծ խմբերի՝ centum (արևմտյան) և satəm (արևելյան) տարբերակման դրույթը կամ ձայնեղ հպական *b-ի (ոմանց կարծիքով էլ՝ խուլ հպական *p-ի) վերականգնման հավաստիությունը:

Համեմատական հնդեվրոպաբանության մեջ այդպիսի նոր որակական փուլի սկիզբը ազդանշանեցին Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի «Լեզվաբանական տիպաբանությունը և հնդեվրոպական հպականների համակարգի վերականգնումը»¹ զեկուցումը և Պ. Ջ. Հոպերի «Կատկայնացած և շնչային հպականները հնդեվրոպական լեզվում» հոդվածը², որոնց *հիմնական նորույթը ավանդական հնդեվրոպաբանության կողմից նախալեզվի համար առաջարկվող պարզ ձայնեղների (*b, *d, *g) փոխարինումն էր կատկայնացած խուլերով (*p, *t, *k)*: Այս գաղափարը խորքի մեջ հեղափոխական էր, որովհետև արմատական փոփոխություն էր առաջարկում նախալեզվի ոչ միայն հնչույթային, այլև ձևահնչույթաբանական և ձևաբանական համակարգերում, հետևաբար առհասարակ վերանայում էր հ.-ե. նախալեզվի մասին ավանդական պատկերացումը: Այդ տեսությունը, որն ստացավ «կատկայինների տեսություն» («глоттальная теория») անվանումը, ուղղակիորեն հարվածում էր ավանդական հնդեվրոպաբանության հիմքերին, որովհետև

¹ St' u Гамкредидзе Т. В., Иванов В. В., Лингвистическая типология и реконструкция системы индоевропейских смычных. Предварительные материалы. («Конференция по сравнительно-исторической грамматике индоевропейских языков» [12-14 декабря]. М., 1972, с. 15-18):

² St' u Hopper Paul J., Glottalized and murmured occlusives in Indo-European, Glossa, 7.2, 1973, pp. 96-134:

նրա ընդունումը նշանակում էր. ա) հրաժարում հ.-ե. նախալեզուն հնդկա-հունա-լատինական կադապարով վերականգնելու պրակտիկայից, որպիսի ուղղվածություն հ.-ե. համեմատական լեզվաբանությունն ուներ սկզբնավորման պահից ի վեր, բ) «Գրիմի օրենք» կոչվող երևույթի, հետևաբար՝ գերմանական «բաղաձայնների տեղաշարժերի» մասին դրույթի մերժում և դրա օրինակով նաև հայկական «բաղաձայնական տեղաշարժերի» դրույթի վերանայում, գ) հ.-ե. նախաձևերի վերականգնման հարցում հայերենի, գերմանական, իտալա-լուսիական և թոխարական լեզուների տվյալների կարևորում, որովհետև «կատկայինների տեսությունը» առաջին հերթին հենվում է այդ լեզուների ընձեռած նյութի վրա:

«Կատկայինների տեսության»¹ Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի առաջարկած տարբերակն ամբողջական տեսք ստացավ ավելի ուշ հրատարակված «Ընդհանուր հնդեվրոպական լեզվի հպականների համակարգի վերականգնումը: «Կատկայնացած հպականները հնդեվրոպականում» հոդվածում և հատկապես «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիները» հիմնարար աշխատության մեջ²:

«Կատկայինների տեսության» Թ. Գամկրելիձեի, Վ. Իվանովի և Պ. Հոպերի վերականգնումներն ունեն հետևյալ տեսքը.

Հ.-ե. հպականների համակարգն ըստ Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի			Հ.-ե. հպականների համակարգն ըստ Պ. Հոպերի		
I	II	III	I	II	III
(p')	b ^h /b	p ^h /p	(p')	bh	p
t'	d ^h /d	t ^h /t	t'	dh	t
K'	G ^h /G	K ^h /K ²	k'	gh	k ³

Այս երկու աղյուսակների համեմատությունից երևում է, որ, ընդհանուր լինելով հիմնական սկզբունքի՝ «կատկայնացած» բաղաձայնների շարքի ճանաչման հարցում, հեղինակների պատկերացումներն ունենին նաև տարբերություններ: Մասնավորապես, Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի հարացույցում խուլերի շարքը ներկայացված է շնչեղ/պարզ (իմա՝ ուժեղ/թույլ) հա-

¹ St' u Գамкрелидзе Т. В., Иванов Вяч. В., Реконструкция системы смычных общеиндоевропейского языка. Глоттализированные смычные в индоевропейском, Вопросы языкознания (шпун-հետև՝ ВЯ), 1980, N 4, с. 21-35; *նյնի*՝ Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, т. I, 1984, с. 5-17:

² St' u Նոյն տեղում, էջ 16:

³ St' u Գамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. I, с. 15; Хопер П. Дж., Типология праиндоевропейского набора сегментов, Новое в зарубежной лингвистике (шпунհետև՝ НЗЛ), вып. XXI, М., 1988, с. 169; *նյնի*՝ Языки “decem” и “taihun”: индоевропейская изоглосса, նոյն տեղում, էջ 173: Շարքերի համամասնությունը պահպանելու համար բաց ենթ թողնում նաև Հոպերի հարացույցում ներկայացված շրթնահետնաքմայինների շարքը:

մակցային տարբերակով¹, իսկ Պ. Հոպերի հարացույցում այն ներկայացված է միայն պարզերի (թույլերի /tenues) տարբերակով:

Հիմք ընդունելով հ.-ե. հպականների՝ ըստ «կատկայինների տեսության» վերամեկնաբանված իրենց հարացույցը՝ Թ. Գամկրելիձեն հին հայերենի հպականների համակարգից՝ ա) դուրս է մղում պարզ խուլերի շարքը (p, t, k), բ) ավանդական ձայնեղների շարքը ներկայացնում է *շնչեղ ձայնեղ/ձայնեղ* (bh/b, dh/d, gh/g) կադապարով՝ որպես նախալեզվի նույնաբնույթ շարքից ուղղակիորեն սերված, որը նշանակում է, որ այդ (II) շարքի հնչույթն ունեցել է երկբնույթ հնչյունական իրացում՝ պարզ (կամ թույլ) և շնչեղացած, գ) ձայնեղների ավանդական շարքի փոխարեն առաջարկում է կատկայինների շարքը ((p[ʰ]), t[ʰ], k[ʰ]), դ) շնչեղ խուլերի շարքը համարում է հ.-ե. շնչեղ խուլ/խուլ (III) շարքից սերված²:

Հպական բաղաձայնների՝ ավանդական հնդեվրոպաբանության կողմից վերականգնվող համակարգը վերանայելու գաղափարն ունեցել է բազմաթիվ կողմնակիցներ (Օ. Ս. Շիրոկով, Յ. Ռասմուսեն, Ա. Օդրիկուր, Ժ. Օդրի, Ֆ. Կորտլանդ և ուրիշներ). սա նշանակում է, որ հնդեվրոպական բաղաձայնների, մասնավորապես՝ հպականների ավանդական (իմա՝ երիտքերականական) վերականգնումը վերանայելու միտքը միայն առանձին գիտնականների «քմահաճույքը» չէր: Ավելին, այդ միտքը չի ծնվել միանգամից, այն ունեցել է նախապատրաստական փուլ՝ ի դեմս ավանդական հնդեվրոպաբանության մեջ հաճախակի հնչող բարեփոխական առաջարկների: Դրան նպաստեց մի կողմից՝ կառուցվածքային հնչույթաբանության, մյուս կողմից՝ տիպաբանության սկզբունքների ու մեթոդների փոխադրումը համեմատաբանական ուսումնասիրությունների ոլորտ: Այս կարգի առաջին դիտարկումներից մեկը հեղինակել է XX դարի I կեսի ֆրանսիացի նշանավոր լեզվաբան Ա. Մարտինեն իր «Խնայողության սկզբունքը հնչյունական փոփոխություններում» աշխատության մեջ: Այստեղ նա մասնավորապես կասկածներ է հայտնում շրթնային *b-ի վերականգնման առնչությամբ. «Լուրջ հիմքեր կան կասկածելու այն բանին, որ հնդեվրոպական լեզվի զարգացման հին փուլերում գոյություն է ունեցել հնչույթ, որը սովորաբար վերականգնվում է որպես *b: Որքանով որ այդ հնչույթը գտնվում է *d, *g, *g^w կարգի և p, b^h շրթնային շարքի հատման կետում (ընդ որում՝ այդ կարգի և այդ շարքի գոյությունը արժանահավատորեն վերականգնված է), պիտի ենթադրել դատարկ վանդակի առկայությունն համակարգում»³: Իսկ մինչ այդ նմանօրինակ կարծիք էր հայտնել

¹ Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի հարացույցում G^b/G, K^b/K-ն խորհրդանշում են ընդհանրապես հետնալեզվայինների (հետնաքմային, քմային, շրթնահետնաքմային) կարգը (տե՛ս **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. В.**, նշվ. աշխ., էջ 13 (տղտղ. 1)):

² Տե՛ս **Гамкрелидзе Т. В.**, Индоевропейская “глоттальная теория” и система древнеармянского консонантизма, Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Երևան, 1984, էջ 33:

³ **Мартинет А.**, Принцип экономии в фонетических изменениях, М., 1960, с. 123-124. Հմնսմ. **Martinet A.**, Économie des changements phonétiques. Traité de phonologie diachronique, Bern, 1955:

դանիացի ակնավոր հնդեվրոպաբան Հ. Պեդերսընը¹, որը, լինելով *դասական հնդեվրոպական լեզվաբանության*² ներկայացուցիչներից, շատ հարցերում հակադրվել է այդ փուլի համեմատաբանության մեջ իշխող գաղափարներիին: Ըստ ամենայնի, սխալված չենք լինի, եթե ասենք, որ Հ. Պեդերսընը *համեմատական հնդեվրոպաբանության հետդասական փուլը նախապատրաստող լեզվաբաններից էր*: Հնդեվրոպական հպականների վերականգնման ավանդական համակարգը վերանայելու վճռական ազդակ եղավ 1957 թ. Ռ. Յակոբսոնի կողմից «Տիպաբանական ուսումնասիրությունները և նրանց ներդրումը պատմահամեմատական լեզվաբանության մեջ» գեկուցումում ձևակերպված լեզվական ընդհանրությո՞րը, ըստ որի՝ *գոյություն ունեցող և ոչ մի լեզվում չի նկատվել դեպք, որ լինի շնչեղ ձայնեղների շարք, առանց համապատասխան խուլերի առկայության* (հմմտ. «Որքանով ինձ հայտնի է, չկա ոչ մի լեզու, որտեղ /t/-/d/ գույզին ավելանար շնչեղ ձայնեղ /d^h/, բայց բացակայեր նրա խուլ /t^h/ համապատասխանը, մինչդեռ /t/, /d/ և /t^h/-ն հաճախ են հանդիպում, առանց համեմատաբար հազվադեպ հանդիպող /d^h-ի...»³): Այսօրինակ բարեփոխական առաջարկներն ավանդական պատկերացումների կրողներից ոմանք փորձեցին հակակշռել նախալեզվում հպականների չորրորդ՝ շնչեղ խուլերի շարքի ընդունումով՝ փաստորեն վերադառնալով հպականների վերականգնման երիտքերականական կադապարին, բայց քիչ չեն նաև եռաշարք հայեցակարգին հետևողները⁴:

¹ Տե՛ս Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 6:

² Այս բնորոշմամբ նկատի ունենք 1870-1950-ական թթ. ընկած մոտ ութսունամյա ժամանակահատվածը, այսինքն՝ երիտքերականների գործունեության և դրան հաջորդող շուրջ երեսնամյա շրջանը, որը հնդեվրոպական համեմատական լեզվաբանության մեջ հատկանշվում է մի կողմից գաղափարների ու սկզբունքների բյուրեղացմամբ, իսկ մյուս կողմից՝ նոր որոնումների աննախադեպ ակտիվությամբ՝ պայմանավորված հատկապես թոխարական և իեթա-լուվական լեզուների հ.-ե. բնույթի հաստատումով:

³ Якобсон Р., Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание, Новое в лингвистике (այսուհետև՝ НЛ), вып. III, М., 1963, с. 103. Ռ. Յակոբսոնի այս գեկուցումը («Typological studies and their contribution to historical comparative linguistics») տպագրվել է Օսլոյում հրատարակված «Proceedings of the Eighth international congress of linguists» ժողովածուում 1958 թ.:

⁴ Հ.-ե. հպականների չորս շարք է վերականգնում, օրինակ, Օ. Սեմերենյին (տե՛ս Семереньи О., Введение в сравнительное языкознание, М., 1980, с. 65-83. Այս գրքի առաջին՝ գերմաներեն տարբերակը լույս է տեսել 1970 թ.): Օ. Սեմերենյիցից դեռևս մի քանի տասնամյակ առաջ Ա. Մեյեն, ընդհանուր հնդեվրոպական լեզվի համար վերականգնելով հպականների երեք շարք՝ ձայնեղ, շնչեղ ձայնեղ, պարզ խուլ հակադրությամբ, չորրորդ՝ շնչեղ խուլերի շարք է վերականգնում «երթե ոչ ողջ հնդեվրոպականի համար ամբողջությամբ, ապա բոլոր դեպքերում հնդ-իրանական, հայերեն և հունարեն լեզուներով ներկայացված շրջանի համար»՝ հիմք ընդունելով այդ լեզուներում առկա տվյալները (հմմտ. Мейе А., Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, с. 116-117): Ուշագրավ է նաև Ա. Մեյեի դիտարկումը *b-ի «համեմատաբար հազվադեպ» հանդիպելու մասին. «.....այն չի հանդիպում ոչ մի կարևոր ածանցում և ոչ մի վերջավորության մեջ. այն երկրորդային ծագում ունի բառերի մի մասում, որոնցում հանդիպում է» (նույն տեղում, էջ 115): Հպականների քառաշարք համա-

Հ.-ե. հպական բաղաձայնների ավանդական համակարգի վերանայման կողմնակիցների հիմնավորումներն ընդհանուր առմամբ նույնն են: Ինչպես արդեն նշվել է, դրանք հիմնված են կառուցվածքաբանական և տիպաբանական մոտեցումների վրա: Պ. Հոպերն այդ մոտեցումներին ավելացնում է նաև երկու հնչույթաբանական ընդհանրույթ. 1) *երկու կատկայնացած հնչույթ չեն կարող հանդիպել մեկ արմատի մեջ*, 2) *միևնույն արմատի մեջ չեն կարող հանդիպել խուլ հպականը (tenuis) և շնչեղ ձայնեղը (media aspirata)*. «...երկրորդ սահմանափակումը բխում է առաջինից՝ որպես *երկու չկատկայնացած բաղաձայնների ըստ ձայնեղության առնմանության* հետևանք»¹:

Դասական հնդեվրոպաբանության սկզբունքների հետևորդները, չանտեսելով տիպաբանական և կառուցվածքային սկզբունքների կիրառման արդյունավետությունը, այնուամենայնիվ արտահայտվել են դրանց գերազնահատման դեմ, և կարծում ենք՝ ոչ անտեղի: Այդպիսի տեսակետներից մեկի համաձայն՝ «...տիպաբանական փաստարկներն ամենակարևորները չեն վերականգնման մեջ: Վերականգնումը պիտի հենվի ամենից առաջ իր սեփական նյութի վրա»²: Իսկ մինչ այդ մատնանշվել էին «կատկայինների տեսության» այլ խոցելի կողմեր ևս: Մասնավորապես՝ ա) հ.-ե. և ոչ մի լեզվում չկան կատկայնացած բաղաձայններ, հետևաբար չկա կատկայինների և ոչ կատկայինների հակադրություն, «հայերենի որոշ բարբառներում խուլ հպականների կատկայնացումը ակնհայտորեն երկրորդային բնույթ ունի. վրացերենի ազդեցություն է»³, բ) ոչ լիովին են պարզաբանվում այդ համակարգից հնդեվրոպականին անցման պայմանները, գ) թեպետև *b հնչույթը բառասկզբում հազվադեպ է հանդիպում, սակայն բառամիջում այն հաճախ է հանդիպում, ուստի ճիշտ չէ *b-ի գոյության բացառումը⁴:

կարգ են ընդունել նաև Թ. Բարրուն (հմմտ. Барроу Т., Санскрит, М., 1976, с. 66) և Գ. Ջահուկյանը (հմմտ. Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 51; նույնի՝ Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, с. 21; նույնի՝ Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 37): Ընդհանուր հնդեվրոպականում հպականների երեք (*t, *d, *dh) շարք են կանխադրում Ա. Սավչենկոն՝ «առավել հավանական համարելով այն դրույթը, որ շնչեղ խուլերը կազմվել են միայն հնդեվրոպական բարբառների մի խմբում՝ կապված «կոկորդայինի» անկման հետ» (հմմտ. Савченко А. Н., Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, с. 69), և Է. Մակևը, ըստ որի՝ «շնչեղ խուլերի շարքը բացակայել է ընդհանուր հնդեվրոպականում և ուշ ծագման տարածաշրջանային նորակազմություն է» (տե՛ս Макаев Э. А., Передвижение согласных в армянском языке, ВЯ, 1961, N 6, с. 25):

¹ St և Хоппер П. Дж., նշվ. աշխ., էջ 174:

² Красухин К. Г., Введение в индоевропейское языкознание, М., 2004, с. 61: Ըստ էության, նմանատիպ մոտեցում ունի նաև Ժ. Օդրին (հմմտ. «Տիպաբանությունը պիտի կիրառել վերականգնման մեջ, բայց բավարար հիմնավորումով, և չպահանջել նրանից այն, ինչը նա չի կարող տալ...»): Одри Ж., Типология и реконструкция, НЗЛ, вып. XXI, с. 190):

³ Джаукян Г. Б., Сравнительная грамматика армянского языка, с. 22.

⁴ St և նույն տեղում:

Տիպաբանությունը փորձում է բացահայտել լեզուների միջև առկա կառուցվածքային ընդհանրությունները և վերջին հաշվով հիմնվում է լեզվական ընդհանրությունների վրա: Տիպաբանական ուսումնասիրությունների փորձը ցույց է տալիս, որ այդ ոլորտի բացահայտումները ոչ միշտ ունեն բացարձակ բնույթ¹: Տիպաբանական գուգահեռները մեծացնում են առաջադրվող դրույթի հավանականությունը, բայց նրան բացարձակ բնույթ չեն հաղորդում: Առավել ևս, եթե խոսքը մեզանից հազարամյակներ առաջ եղած մի լեզվավիճակի մասին է, որին վերաբերող յուրաքանչյուր տեսակետ նոր բացահայտումների լույսի ներքո միշտ կարող է փոխվել: Ռ. Յակոբսոնի վերոհիշյալ տիպաբանական բացահայտումը, որի հիմքում գործառական և երկատոմային հնչույթաբանությունների համադրական կադապարն է², անշուշտ, քայլ առաջ էր նախորդ դարի կետերի համեմատական լեզվաբանության ընդհանուր հենքի վրա, բայց այն նույնպես ոչ միայն չի տալիս բոլոր հարցերի պատասխանը, այլև երբեմն ավելի է դժվարացնում դրանց որոնումը: Այսպես, եթե, մի կողմից, այն հաստատում է հ.-ե. նախալեզվում «կոկորդային բաղաձայնների» (մասնավորապես *h*-ի տեսքով) գոյության վարկածը³, ապա, մյուս կողմից, դուռ է բացում մերժողական գաղափարների համար, ինչպիսին էր, օրինակ, *լեզվաբնտանիքի՝ որպես լեզվական ընդհանուր հիմքից սերված լեզուների ամբողջության*՝ ավանդական հնդեվրոպաբանության մեջ ընդունված դրույթի մերժումը ոմանց կողմից: Լեզվաբնտանիքի ավանդական (բայց ոչ շլայխերյան ուղղագիծ պատկերացումով) ըմբռնման դեմ հետևողականորեն հանդես են եկել իտալական նեոլինգվիստիկայի ներկայացուցիչները, օրինակ՝ Վ. Պիզանին (հմմտ. «...համեմատական հնդեվրոպական լեզվաբանությունը լիարժեք գոյության իրավունք կունենա միայն այն դեպքում, եթե այն սահմանափակվի երևույթների համեմատությամբ ու «նախաերևույթների» («*появлениям*») և ոչ թե «նախալեզուների» վերականգնումով՝ խիստ միակերպ լեզվական համակարգերի իմաստով⁴: Իհարկե, հետշլայխերյան հնդեվրոպական լեզվաբանության մեջ թերևս ոչ ոքի մտքով չի անցել, որ հնարավոր է վերականգնել հ.-ե. նախալեզուն՝ որպես երբեմնի լեզվական իրողություն, որով հնարավոր է հաղորդակցվել թեկուզև այնպես, ինչպես, օրինակ, լատիներենով: Հ.-ե. նախալեզվի հնարավոր վերականգնումը իրատեսական չի համարել նաև Ա. Մեյեն (հմմտ. «Լեզուների որևէ

¹ Ռ. Յակոբսոնի կողմից առաջարկված մի քանի հնչույթաբանական ընդհանրություններից բացառությունների մասին տե՛ս **Хоккетт Ч. Ф.**, Проблема языковых универсалий, НЛ, вып. V, М., 1970, с. 72-73:

² Տե՛ս **Якобсон Р., Фант Г. М. и Халле М.**, Введение в анализ речи. Различительные признаки и их корреляты, Новое в лингвистике (սլայխեսուն՝ НЛ), вып. II, М., с. 173-230; **Якобсон Р. и Халле М.**, Фонология и ее отношение к фонетике, նույն տեղում, էջ 231-278:

³ Տե՛ս **Иванов Вяч. В.**, Типология и сравнительно-историческое языкознание, ВЯ, 1958, N 5, с. 37:

⁴ Տե՛ս **Пизани В.**, К индоевропейской проблеме, ВЯ, 1966, N 4, с. 10:

խմբի համեմատական քերականության խնդիրը այդ լեզուներով ներկայացված համապատասխանությունների ուսումնասիրությունն է»¹), բայց նա, այնուամենայնիվ, լեզվաընտանիքի ավանդական պատկերացման կրող է²: Լեզվաընտանիքի, ավելի շուտ՝ «լեզվական ընդհանրության» մասին Պիզանիի պատկերացումից մինչև Ն. Ս. Տրուբեցկոյի առաջ քաշած «լեզվամիություն» վարկածը մի քայլ է³:

Նկատի ունենալով այն մեծ կարևորությունը, որ համեմատական հնդեվրոպաբանության մեջ ի սկզբանե տրվել է հպական բաղաձայնների բնույթի որոշմանը, չափազանցություն չի լինի ասել, որ այդ հիմնահարցը վերածվել է համեմատական լեզվաբանության յուրօրինակ փորձաքարի: Նախալեզվում հպական բաղաձայնների շարքերի թվի և տեսակների ճշտումը, ինչպես ցույց է տալիս համեմատաբանական ուսմունքների պատմությունը, կարող է արմատապես վերափոխել ոչ միայն հ. -ե. նախալեզվի, այլև՝ հ. -ե. լեզվաընտանիքում առաջին բարբառների կատարած դերի մասին մեր պատկերացումները: Ըստ էության, այդպիսի հայտ է ներկայացրել «կատկայինների տեսությունը», որի առաջադրումից մոտ տասը տարի անց Պ. Հոպերը գրել է. «...կատկայինների տեսությունը պատմականորեն գտնվում է զարգացման այն աստիճանում, որում գտնվում էր կոկորդայինների տեսությունը Ֆ. դը Սոսյուրի «Նկատառումներ հնդեվրոպական լեզուներում ձայնավորների նախնական համակարգի մասին» հրապարակումից անմիջապես հետո. առաջադրվելով և հիմնավորված լինելով ամենից առաջ կառուցվածքային և տեսական հիմքերի վրա, այն այժմ պիտի մտնի որոշակի դրույթների որոնման փուլ»⁴: Պիտի ասել, որ այդ տեսությունը, հատկապես Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի առաջարկած տարբերակով, հնդեվրոպական հնչույթային համակարգի մասին երբևէ մշակված ամբողջական և ինքնատիպ հայեցակարգերից է: Սակայն, ինչպես տեսանք, այն նույնպես միանշանակ չի ընդունվում արդի հնդեվրոպաբանության մեջ: Ավանդական հնդեվրոպաբանության հետևորդներից բացի, այդ տեսության դեմ առարկություններ է ներկայացնում նաև «բնական լեզվաբանությունը»⁵:

«Կատկայինների տեսությունը» առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես հետևյալ առումներով. 1) վերանայում է հ. -ե. նախալեզվի նկարագրի համար ավանդական հնդեվրոպաբանության կողմից հիմնական դիտված լեզուների (հին հնդկերեն, հին հունարեն, լատիներեն) ցանկը՝ դրանք փոխարինելով հայերեն, գերմանական, իսթա-լուվական և թոխարական լեզուներով, այլ կերպ ասած՝ վերջին լեզուներին նախկին՝ «եզ-

¹ Տե՛ս **Мейе А.**, նշվ. աշխ., էջ 48:

² Տե՛ս նույն տեղում, էջ 50:

³ Տե՛ս **Трубецкой Н. С.**, Мысли об индоевропейской проблеме, Избранные труды по филологии, М., 1987, с. 44-59:

⁴ **Хоппер П. Дж.**, նշվ. աշխ., էջ 178:

⁵ Տե՛ս **Գաբրիելյան Յու.**, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Երևան, 2001:

րային» կարգավիճակի փոխարեն տրվում է առաջնային նշանակություն, 2) հ.-ե. նախահայրենիքի տեղադրությունը Եվրոպայից տեղափոխում է Ասիա (ի նպաստ այդ տեսակետի վկայում են նաև նոստրատիկ լեզվաբանության տվյալները, որոնք հ.-ե. լեզվաբնտանիքը դիտարկում են Առաջավոր Ասիային հարակից տարածաշրջաններում տեղակայված ոչ հ.-ե. լեզուների՝ սեմականի, իբերա-կովկասյանի, թյուրքականի ևն հետ հնարավոր առնչությունների տիրություն), 3) վերանայման է ենթարկում գերմանական և հայկական «բաղաձայնական տեղաշարժերի» հարցը, ավելի ճիշտ՝ մերժում է այդպիսի տեղաշարժերի հնարավորությունը:

Ասվածից պարզ է դառնում, որ հպական բաղաձայնների բնույթի որոշման հարցն ընդհանուր հնդեվրոպական նշանակություն ունի: Հպականներին վերագրվող համակարգային նկարագրով պայմանավորված՝ կարող են վերանայվել ոչ միայն առանձին տեսակետներ, այլև համեմատական հնդեվրոպաբանության հիմնարար դրույթներ, իսկ դրա հետևանքով կարող է հիմնովին փոխվել մեր պատկերացումը ինչպես հ.-ե. նախալեզվի, այնպես էլ ընդհանրապես հ.-ե. լեզվաբնտանիքի մասին: Կարծում ենք՝ ինչպես առհասարակ լեզվական վերականգնումների դեպքում, այնպես էլ հպականների վերականգնման դեպքում պետք է նկատի առնվեն հետևյալ իրողությունները:

1) *Լեզվաբնտանիք* և *լեզվամիություն* հասկացությունները մեկը մյուսին չեն բացառում, ինչպես երբեմն դա ներկայացվում է համեմատաբանական ուսումնասիրություններում¹: Ճիշտ է, լեզուների պատմության մեջ եղել են դեպքեր, երբ լեզվական փոխադրությունների հետևանքով լեզուներից մեկը հեռացել է իր ծագումնաբանական ակունքներից և ձեռք է բերել այլ լեզվահամակարգին բնորոշ գծեր, այսինքն՝ լեզվական նոր նկարագիր է առաջացել զուգամիտման (կոնվերգենտ) ճանապարհով, սակայն օրինաչափական է լեզուների ու բարբառների առաջացումը տարամետ (դիվերգենտ) զարգացման ճանապարհով: Հետևաբար ծագումնաբանական ակնհայտ ընդհանրությունների դեպքում (որոնք, ի դեպ, առկա են ինչպես լավ ուսումնասիրված հնդեվրոպական, այնպես այլ լեզվաբնտանիքների պարագայում), ավելի տրամաբանական է նոր լեզուների առաջացման համար ենթադրել տարամետ, այսինքն՝ տրոհման ուղին, քան զուգամետ, այն է՝ միավորման ուղին: Սրանից հետևում է, որ շատ հեռավոր մի ժամանակաշրջանում՝ մեզանից հազարամյակներ առաջ (ըստ Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի՝ մ. թ.

¹ Տե՛ս **Пизани В.**, նշվ. աշխ.: չմտ. նաև. «Այն, ինչը մենք անվանում ենք «հնդեվրոպական լեզու», մի կողմից կարող էր գոյություն ունենալ միայն որպես մեկը մյուսից խիստ տարբեր տարածական բարբառների բազմություն, իսկ մյուս կողմից՝ այդ ձևով պիտի գոյություն ունենար շատ երկար ժամանակ, որի ընթացքում լեզվում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ, որոնք ներառել են բարբառների մերթ մի, մերթ մյուս մասը» (տե՛ս **Пизани В.**, *Общее и индоевропейское языкознание*, *Общее и индоевропейское языкознание*, М., 1956, с. 165): Նրա կարծիքով, «ամեն ինչ հանգում է, ըստ էության, բոլոր հնդեվրոպական լեզուները ներառող զուգաբանությունների շարքը ճշտելուն» (նույն տեղում, էջ 166):

ա. IV հազարամյակում), այնուամենայնիվ եղել է մի լեզվավիճակ, որից պարբերական և երկարատև տրոհումների հետևանքով առաջացել են հ.-ե. առաջին բարբառները: Մինչև տրոհումը այդ լեզվավիճակին բնորոշ են եղել զգալի քանակով ընդհանուր լեզվական հատկանիշներ՝ զուգաբանություններ: Այդ լեզվավիճակը կարելի է բնութագրել իբրև *բարբառային տարրերով հազեցած լեզվական հիմք*, որին էլ հնդեվրոպական լեզվաբանության նախահայրերը տվել են *հ.-ե. նախալեզու* անվանումը: Այդպիսի լեզվական հիմքի մերժումը նույնն է, թե ասել՝ երբևէ գոյություն չի ունեցել միասնական հայոց լեզու, այլ եղել են միայն զուգահեռ գործառոց հայերեն բարբառներ:

2) Նախալեզվի՝ *որպես երբեմնի գոյություն ունեցած լեզվական իրողության* դրույթի ընդունումը ենթադրում է նաև *նախածողովրդի* և *նախահայրենիքի* դրույթների ընդունում, որքան էլ որ այդ հասկացությունների շուրջ գիտնականների պատկերացումները շատ տարբեր լինեն: Կարծում ենք՝ նախահայրենիքի տեղադրության հարցում առավել համոզիչ են Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի փաստարկները, ըստ որոնց՝ հ.-ե. նախահայրենիքը եղել է Մերձավոր արևելքում՝ Բալկաններից մինչև Թուրքեստան ընկած տարածքում¹: Ավելի վաղ այդպիսի տեսակետ առաջադրել էր Գ. Ջահուկյանը²:

3) Նախալեզվական վիճակը վերականգնելիս հ.-ե. առաջին բարբառներում (=լեզուներում) դիտարկվող տվյալները պետք է հաշվի առնվեն *հավասարապես*, և ոչ թե, այս կամ այն կանխադրությից ելնելով, նախապատվությունը տրվի դրանցից մի քանիսին, ինչպես սովորաբար արվել է թե՛ ավանդական և թե՛ «կատկայինների» կամ այլ տեսություններում³: Որքան էլ տրամաբանորեն ընդունելի լինի նախալեզվական վիճակը վերականգնելիս առաջնահերթությունը նախահայրենիքում և նրան մերձ տարածքներում խոսվող լեզուներին տալու դրույթը, չպետք է բացառել, սակայն, որ այդ լեզուները, հազարամյակների ընթացքում շփվելով ոչ ցեղակից լեզուների հետ, կարող էին ենթարկվել ենթաշերտային, մակաշերտային և առշերտային փոխներթափանցումների (որոնց հետքերը համեմատական լեզվաբանությունը բավարար չափով բացահայտել է նախորդ դարի ընթացքում), հետևաբար ոչ պակաս չափով կարող էին հեռանալ նախալեզվական դրությունից: Ա. Մեյեն, օրինակ, խոսում է հայերենի և կովկասյան լեզուների, մասնավորապես՝ վրացերենի հպական և հպաշփական բաղաձայնների հա-

¹ Տե՛ս Գамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 869-871:

² Տե՛ս Դжаукян Г. Б., Очерки дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 38-39:

³ Այս առումով, կարծում ենք՝ լիովին իրավունք ունի Վ. Պիզանին՝ գրելով. «... եթե մենք, օրինակ, վերանանք հունարենից և սանսկրիտից, ապա, հասկանալի է, հնդեվրոպական զուգաբանությունների համակարգը շատ ուժեղ կերպով կտարբերվի այդ լեզվի Բրուգմանի տված բնութագրից, և կարել կլինի հարց առաջադրել՝ արդյո՞ք այդ երկու լեզուները հնդեվրոպական են: Իսկ ո՞վ է մեզ իրավունք տվել ... հունարենը համարելու ավելի շատ հնդեվրոպական, քան, օրինակ, լատիներենը կամ կելտերենը» (տե՛ս Փизани В., նշվ. աշխ., էջ 173, 174):

մակարգային համընկնելիության մասին. այս դիտարկումը հատուկ նշանակություն է ձեռք բերում, երբ նկատի ենք ունենում, որ հպաշփականները բացակայում են եվրոպական տարածաշրջանի հ.-ե. լեզուներում¹: Նշանակում է՝ «կատկայինների տեսության» հիմնական կովաններից մեկը՝ հայերենի որոշ բարբառներում ենթադրյալ կատկայնացած հնչյունների գոյության հանգամանքը, իսկապես բավարար չէ ինչպես հ.-ե. նախալեզվում, այնպես էլ հին հայերենում կատկայինների շարք տարբերակելու համար, որովհետև՝ 1) դրանք կարող էին լինել հարևան ոչ հ.-ե. (օր.՝ սեմական, քարթվելական) լեզուներից ներթափանցումներ, 2) ապացուցված չէ՝ դրանք (եթե, իհարկե, եղել են) ունեցել են հնչույթային և արժեք, թե՛ միայն հնչյունական:

Հայտնի է, որ շնչեղ հպականների շարքերը հ.-ե. նախալեզվում վերականգնվում են հիմնականում հին հնդկերենի և հին հայերենի տվյալների հիման վրա: Ըստ այդմ՝ շնչեղ ձայնեղների շարքը (b^h, g^h, d^h) վստահորեն վկայված է միայն հին հնդկերենում, իսկ շնչեղ խուլերի շարքը (p^h, k^h, t^h)՝ հին հնդկերենում և հին հայերենում: Ենթադրաբար շնչեղացած են եղել նաև հին հունարենի խուլերը. այս լեզվում սնակ. p^h, իրան. f և հյ. փ (p^h)-ի համապատասխանն է ֆ-ն, *t^h-ի ներկայացուցիչներն են համարվում τ-ն և θ-ն, իսկ *k^h-ի ներկայացուցիչը՝ χ-ն²: Եթե նույնիսկ շնչեղ խուլեր ենթադրվեն ևս մի քանի լեզուների համար, օր.՝ ընդհանուր գերմանականի³, միևնույնն է, անհամեմատ մեծ է այդ շարքը չտարբերակող լեզուների թիվը, էլ չենք խոսում շնչեղ ձայնեղների շարքի մասին: Բայց և այնպես, ինչպես նկատել է Ա. Մեյեն, այս փաստերն անտեսել չի կարելի: Լայն առումով նմանատիպ երևույթները կարելի է դասել օրինաչափություններից շեղումների կարգին, որոնց, ի դեպ, Ա. Մեյեն մեծ նշանակություն է տվել նախաձևերի վերականգնման հարցում: Ուստի ոչ պատահականորեն հպականների վերականգնման ավանդական սխեման մերժողները ևս հիմնականում ընդունում են շնչեղների շարքերը և առաջին հերթին մեկ լեզվով՝ հին հնդկերենով ներկայացված շնչեղ ձայնեղների շարքը: Վերջիններս, սակայն, մերժում են պարզ ձայնեղների, երբեմն էլ՝ պարզ խուլերի շարքը՝ դրանք փոխարինելով, օրինակ, «կատկայինների» ենթադրյալ շարքով:

Եթե հին հնդկերենում շնչեղ ձայնեղների շարքը վկայված է գրավոր հուշարձաններով և որպես այդպիսին՝ մասնագիտական շրջանակներում տարակարծությունների տեղիք չի տվել, ապա գրաբարյան տեքստերը (բնականաբար՝ նաև մաշտոցյան այբուբենը) հին հայերենում այդպիսի շարքի մասին

¹ Sté u Meillet A., Les dialectes indo-européens, Paris, 1950, pp. 90-91, 138: Այս հարցում այլ տեսակետ է հայտնել Հ. Պեդերսընը: Վերջինս հպաշփական հնչյունների առաջացումը բացատրում է հ.-ե. այլ լեզուներում տեղի ունեցած հնչյունական զարգացումների համատեքստում (տե՛ս Պեդերսըն Հ., Հայերեն և դրացի լեզուները, Վ., 1907, էջ 165-167):

² Sté u Meյe A., նշվ. աշխ., էջ 116; Семереньи О., Введение в сравнительное языкознание, М., 1980, с. 82:

³ Sté u Семереньи О., նշվ. աշխ.:

վկայություններ չունեն: Ումանք, նկատի ունենալով, որ հայերենի որոշ բարբառներում տարբերակվում են շնչեղ ձայնեղներ (ընդ որում՝ այդ բարբառներին վերագրվել է գրաբարից ավելի մեծ հնություն), հակված են նախագրաբարյան հայերենում ևս ընդունելու նմանատիպ հնչույթների գոյությունը: Ուրիշներն էլ շնչեղ ձայնեղների գոյություն են ենթադրել հենց գրաբարյան հայերենի փուլում: Վերջիններիս կարծիքով, հյ. բ, գ, դ, ձ, ջ տառերը իրականում եղել են ձայնեղ շնչեղների և ոչ թե պարզերի գրային նշանները: Այդ մասին առաջինը կարծիք է հայտնել Հ. Պեդերսընը (հմմտ. «Միակ միջոցն է ընդունիլ թե հին հայերենի այն ձայները՝ որոնք *q, d, n, p* գրերով կը գրուին (եւ որոնք ի մէջ այլոց յուն. *γ, δ, β* ձայները տառադարձելու կը գործածուին), իրապէս անփոփոխ միջակ-թաւերը կը ներկայացնեն, ուրեմն իբր *gh, zh, dh, bh* (*ջ* տառն ալ ըստ այսմ՝ իբր *Յh*) արտաբերվելու են»¹): Հ. Պեդերսընի այս տեսակետը հավանական է համարել Ա. Մեյեն և իր «Հնդեվրոպական բարբառները» ուսումնասիրության մեջ, հղում անելով Է. Ջիվերսի և Հ. Աճառյանի կողմից հայերենի մի քանի բարբառներում ու խոսվածքներում (Մուշի, Մեքաստիայի, Աշտարակի) մատնանշված համապատասխան տվյալներին, գրել է. «Բնական կլինէր ընդունել, որ ընդհանուր հայերենի *b, d, g*-ն իրենց բնույթով ունեցել են հնդեվրոպական շնչեղ ձայնեղներին նման յուրահատկություն»²: Այդ միտքը տեղ է գտել նաև Մեյեի «Գերմանական խմբի լեզուների հիմնական առանձնահատկությունները» գրքում՝ հայերենի և գերմանական լեզուների «բաղաձայնական տեղաշարժերի» քննության առնչությամբ (հմմտ.«... *bh, dh, gh*-ը նրանցում ներկայացված են եղել ինչպէս *b, d, g*, երկու լեզուներում էլ սկզբնապէս եղած լինելով, ըստ երևույթին, շնչեղներ»³): Հին հայերենում շնչեղ ձայնեղների գոյությունն ընդունել են նախորդ դարի առաջին կեսի այլ հնդեվրոպաբաններ ևս (Ժ. Ֆուրկե, Է. Բենվենիստ, Վ. Գեորգիև, Հ. Ֆոգտ, Վ. Պիզանի, Ու. Լեման, Ֆ. Ֆելդի, Վ. Իվանով): Ուրիշներն էլ (Է. Աղայան, Գ. Ջահուկյան, Յա. Օտրեմբսկի, Լ. Ջաբրոցկի, Է. Մական) մերժել են այդ տեսակետը: Հին՝ նախագրաբարյան հայերենի (ըստ Գ. Ջահուկյանի՝ *նախահին հայերենի*) բաղաձայնական համակարգի բնույթի վերաբերյալ վերոհիշյալ հեղինակների տեսակետները տեղ են գտել, մասնավորապէս, «Вопросы языкознания» ամսագրի 1959-1962 թթ. մի շարք համարներում: Այդ հարցի շուրջ բանավեճն սկսվել է Ա. Ղարիբյանի «Հայերենի բաղաձայնական համակարգի մասին» հոդվածով, որում հեղինակը հայերենի արևմտյան և արևելյան բարբառախմբերի որոշ բարբառներում (Ակնի, Մեքաստիայի, Արաբկիրի, Շապին-Գարահիսարի, Համշենի, Արարատյան ևն) առկա շնչեղ ձայնեղների հիման վրա փորձ է արել ապացուցելու, թե նշված բարբառները գրաբարից ավելի հին են, և այդ հնչյունները նրանք ուղղակիորեն ժառանգել են հ.-ե. նախալեզ-

¹ Հ. Պեդերսըն, նշվ. աշխ., էջ 8:

² A. Meillet, աշխ., էջ 13:

³ A. Meïe, Основные особенности германской группы языков, М., 1952, с. 41.

վից¹: Ա. Ղարիբյանի հարցադրումը, ինչպես նկատել են բանավեճի մասնակիցները, կարևոր նշանակություն ուներ ոչ միայն պատմահամեմատական հայերենագիտության համար, այլև առհասարակ համեմատական հնդեվրոպաբանության համար, քանզի այդ վարկածի ընդունումը կնշանակեր՝ 1) ընդունել նաև համապատասխան բարբառների՝ գրաբարից ավելի հին լինելը, հետևաբար՝ 2) վերամեկնաբանել հայերենի «բաղաձայնական տեղաշարժի» մասին դրույթը, չնայած որ Ա. Ղարիբյանը փորձում է իր մեկնաբանության մեջ նույնպես «տեղաշարժ» ցույց տալ²: Վերջին կետի առնչությամբ Վ. Ժիրմունսկին բանավեճի արդյունքներն ամփոփող հոդվածում գրել է. «Եթե համաձայնվենք Ա. Ա. Ղարիբյանի դրույթի հետ, որ «հայկական բարբառների խմբավորումն ըստ բաղաձայնների համակարգի արտացոլում է հայոց լեզվի տարածումը պատմական Հայաստանի տարածքում»..., ապա հայկական և գերմանական տեղաշարժերի միջև ծագումնաբանական կապի հնարավորությունը լիովին վերանում է, և նրա վրա հիմնված տեսությունները պահանջում են համապատասխան վերանայում»³: Ա. Ղարիբյանի տեսակետը մերժողները

¹ См' u **Гарибян А. С.**, Об армянском консонантизме, ВЯ, 1959, N 5, с. 81-90: Ա. Ղարիբյանին՝ որպես բանավեճի նախաձեռնողի, նույն ամսագրի էջերում երկրորդ հրապարակման հնարավորություն է տրվել (հմմտ. **Гарибян А. С.**, Еще раз об армянском консонантизме, ВЯ, 1962, N 2, с. 18-23): Նկատելի է, որ վերջին հրապարակումը, առաջինի դրույթները պաշտպանելով հանդերձ, ունի ավելի մեղմ տոնայնություն: Մեր կարծիքով այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ նույնիսկ հիմնական հարցում իրեն համախոհներից ոմանց կարծիքները քննադատական շեշտադրումներ են պարունակում հարակից հարցադրումների առնչությամբ: Մինչ այդ նշված հարցի շուրջ բանավեճը սկսվել էր «Պատմաբանասիրական» հանդեսի էջերում, որին մասնակցել էին Է. Բ. Աղայանը, Գ. Բ. Ջահուկյանը, Ժ. Ֆուրկեն և Գ. Սևակը (տե՛ս **Սևակ Գ.**, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1959, թիվ 1, էջ 224-245):

² Բանավեճի մասնակիցներից ոմանք իրավացիորեն նկատում են, որ Ա. Ղարիբյանի կողմից նշված հնչյունական (հնչույթային) անցումները դասական իմաստով չեն համապատասխանում «տեղաշարժի» ըմբռնմանը, որպիսին տեղի է ունեցել, օրինակ, գերմանական բաղաձայնների դեպքում, որովհետև, ի տարբերություն գերմանական «բաղաձայնների տեղաշարժի», որը կրել է համակարգային բնույթ (իմա՝ ներառել է հպականների բոլոր շարքերը), Ա. Ղարիբյանի սխեմայում այն համակարգային բնույթ չունի, ավելին՝ հակասում է նաև հայերենի «բաղաձայնական տեղաշարժի» մասին ավանդական հնդեվրոպաբանության մեջ դեռևս Ա. Մելեի ժամանակներից և նրա հետևողությամբ ընդունված պատկերացումներին (տե՛ս **Бенвенист Э.**, Проблемы армянского консонантизма, ВЯ, 1961, N 3, с. 38; **Макаев Э. А.**, Передвижение согласных в армянском языке, ВЯ, 1961, N 6, с. 23): Ըստ էության, այդ ըմբռնումն ընկած է նաև Է. Աղայանի և Գ. Ջահուկյանի համապատասխան հոդվածների հիմքում (տե՛ս **Աղայան Է. Բ.**, Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, ՊԲՀ, 1958, թիվ 1, էջ 211-233; **Ջահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, ՊԲՀ, 1959, թիվ 2-3, էջ 282-319; **Агаян Э. Б.**, О генезисе армянского консонантизма, ВЯ, 1960, N 4, с. 37-52; **Джаукян Г. Б.**, К вопросу о происхождении армянских диалектов, ВЯ, 1960, N 6, с. 39-49): Ուշագրավ է հատկապես *հնչունական տեղաշարժի* հասկացությանը Է. Մակաևի կողմից տրված մեկնաբանությունը (տե՛ս նույն տեղում):

³ См' u **Жирмунский В. М.**, Некоторые итоги дискуссии об армянском консонантизме, ВЯ, 1962, N 5, с. 34:

մասնավորապես նշում էին, որ՝ ա) միայն շնչեղ ձայնեղների առկայությունը բավարար չէ այդ բարբառները գրաբարից ավելի հին համարելու համար, որովհետև դրանք կարող էին լինել նաև հետագա զարգացման արդյունք (հմմտ. «...հայերեն բարբառների շնչեղ ձայնեղները ներկայացնում են ոչ թե հնդեվրոպական նույն բաղաձայնների ուղղակի շարունակությունը, այլ հին հայերենի բ, գ, դ, ձ, ջ ձայնեղների հետագայում շնչեղացած վիճակը»¹: Հմմտ. նաև՝ «Ես կարծում եմ, որ բարբառային bh, dh, gh-ը ավելի ուշ, արդեն հայկական ծագման նորույթներ են»²). բ) պարզ չէ՝ շնչեղ ձայնեղները եղել են ինքնուրույն հնչույթներ, թե *շնչեղ ձայնեղ/ձայնեղ* (հմմտ. B³ տիպի) համակցային հնչույթի այլահնչակներ, մասնավանդ որ այդ հնչունների հնչույթաբանական կարգավիճակը պարզ չէ նաև ժամանակակից հայերենի բարբառներում, որոնք էլ, ըստ էության, մեկնակետ են եղել գրաբարյան և նախագրաբարյան հայերեններում շնչեղ ձայնեղների շարքի կանխադրման համար³: Մաշտոցյան գրային համակարգում բ, գ, դ, ձ, ջ տառերը շնչեղ ձայնեղների գրային նշաններ համարելու դեպքում մենք կասկածի ենք ենթարկում այդ այբուբենի հնչույթային ճշգրտության մասին մինչև այժմ բազմիցս (և ոչ միայն հայագրի մտավորականների կողմից) արտահայտված մտքերը: Ընդ որում՝ *միայն ենթադրությունների ու վարկածային կանխադրումների հիման վրա*: Այդ դեպքում տրամաբանական չէ, արդյոք ք այն հարցը, թե ինչպես է, որ Մաշտոցը կարողացավ կռահել խուլերի երկու առանձին հնչույթային շարքերի՝ պարզերի և շնչեղների (հմմտ. *պ, կ, տ, ծ, ճ*, և *փ, ք, թ, ց, ջ*) գոյությունը գրաբարյան հայերենում, բայց չկռահեց ձայնեղների երկու հնչույթային շարքերի գոյությունը: Մեզ համար (ինչպես և մեզանից առաջ՝ շատերի) պատասխանը միանշանակ է. *որովհետև գրաբարյան հայերենում ձայնեղները ներկայացված են եղել միայն մեկ կարգով՝ պարզերի*: Ասվածը, սակայն, չի նշանակում, թե գրաբարում բացառվում էր նաև շնչեղ ձայնեղների՝ որպես ձայնեղների կարգի այլահնչակների, ավելի պարզ հնչունների գոյությունը: Իսկ նախագրաբարյան փուլում նրանց հնչույթային կարգավիճակի հարցը մեծապես պայմանավորված է հ. -ե նախալեզվում, հատկապես նրա *ընդհանուր հնդեվրոպական* փուլում (որին հաջորդել է նախալեզվի տրոհումը) այդպիսի հնչույթային կարգ ճանաչելու կամ չճանաչելու հանգամանքով:

Հին հայերենի որևէ փուլում (նախագրաբարյան կամ գրաբարյան) շնչեղ ձայնեղների գոյության ընդունումը հնդեվրոպական լեզվաբանության համար կարևոր նշանակություն ուներ այն առումով, որ հայերենը դառնում էր

¹ Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 219:

² **Отрембский Я.**, По поводу армянского консонантизма, ВЯ, 1961, N 3, с. 44. Յան Օտրեմբսկու վարկածի համաձայն՝ հայերենի բարբառային շնչեղ ձայնեղները «...նախ ի հայտ են եկել որպես շնչեղ խուլերի համապատասխան ձայնեղներ բառերի որոշակի խմբի հուզարտահայտչական ձևերում, գլխավորապես՝ բառասկզբում (ph:bh, th:dh, kh:gh) և հետո աստիճանաբար սկսել են տարածվել b, d, g-ի հաշվին» (նույն տեղում, էջ 43-44):

³ Տե՛ս **Макаев Э. А.**, նշվ. աշխ., էջ 28:

շնչեղ ձայնեղների շարք տարբերակող երկրորդ լեզուն՝ հին հնդկերենի հետ միասին, ուստի ավելի համոզիչ էր դառնում հ.-ե. նախալեզվում այդպիսի կարգի վերականգնումը, որի գոյությունը նախորդ դարի երկրորդ կեսին տիպարանական և կառուցվածքաբանական փաստարկումներով սկսել էին մերժել: Այդ ընդհանուր միտումից բացի, կային նաև մասնավոր միտումներ, որոնք նկատելի են վերոհիշյալ բանավեճի առանձին մասնակիցների տեսակետներում. նախագրաբարյան (կամ գրաբարյան) փուլում շնչեղ ձայնեղների կարգի տարբերակումը դառնում էր այս կամ այն վարկածի լրացուցիչ կովան: Այսպես, նախագրաբարյան հայերենում շնչեղ ձայնեղների տարբերակման դրույթը բուլղարացի գիտնական Վ. Գեորգիևի համար դառնում է հիմնական կովաններից մեկը՝ ասելու, որ «հայոց լեզուն ներկայացնում է փոյուզերենի հետագա զարգացումը կամ ծայրահեղ դեպքում՝ հայերենը և փոյուզերենը մեկ ընդհանուր լեզվի բարբառներ են»¹:

Հ.-ե. նախալեզվի հպականների համակարգը վերականգնելիս, ըստ ամենայնի, հատուկ կարևորություն պիտի տալ տիպարանական տվյալներին և առաջին հերթին՝ միևնույն լեզվաընտանիքի լեզուներում առկա տվյալներին: Ըստ այդմ՝ հ.-ե. թե՛ հին լեզուների և թե՛ նորերի գերակշռող մեծամասնությունը տարբերակում է հպականների միայն երկու շարք՝ ձայնեղ/խուլ (b/p, g/k, d/t) տիպի կամ ձայնեղ/շնչեղ խուլ (b/ph, g/kh, d/th) տիպի: Առաջին տիպին են վերաբերում խեթա-լուվական լեզուները, հին սլավոներենը, հին ռուսերենը, լատիներենը, հին պարսկերենը, գոթերենը, հին անգլերենը, ժամ. ֆրանսերենը, ժամ. ռուսերենը և այլն: Երկրորդ տիպին է վերաբերում, օրինակ, ժամ. անգլերենը: Իհարկե, պիտի նկատի ունենալ, որ նշված տիպերին վերաբերող լեզուների հպականների համակարգերը լիովին նույնական չեն: Օրինակ՝ լատիներենը, գոթերենն ու խեթերենը ունեն գ, որը հնչարտաբերական որակներով մոտ է [kh]-ի, հին անգլերենում ինքնուրույն հնչույթներ են համարվում կրկնակ գրույթներով արտացոլվող pp, bb, gg, քմային g'g', k'k' և միագրույթ քմային g', k'-ն², գոթերենում b, d, g-ն եղել են ֆ (b), ծ (d), Յ (g) շփականների դիրքային տարբերակներ և ոչ թե ինքնուրույն հնչույթներ³ և այլն, բայց այդ ամենն ընդհանուր սկզբունքին չի հակասում: Միայն հին հնդկերենն է տարբերակել հպականների չորս շարք (p, ph, b, bh), իսկ երեք շարք տարբերակել են հին հայերենը, հին հունարենը և ավեստայի

¹ Георгиев В. И., Передвижение смычных согласных в армянском языке и вопросы этногенеза армян, ВЯ, 1960, N 5, с. 35: Այդ մասին Վ. Պիզանին գրել է. «Վ. Բ. Գեորգիևը առաջադրեց հայերի ծագման փայլուն վարկած, որը, սակայն, առնվազն ներկա ժամանակի համար մնում է անընդունելի» (տե՛ս Սմիրնիցկի Ա. И., Об армянских отражениях индоевропейских взрывных, ВЯ, 1961, N 4, с. 49-50): Տե՛ս նաև Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 122; նույնի՝ Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 87-88:

² Տե՛ս Սմիրնիցկի Ա. И., Древнеанглийский язык, М., 1955, с. 70-73:

³ Տե՛ս Գухман М. М., Готский язык, М., 1958, с. 60-62:

լեզուն: Շնչեղների շարքում հայերենի Փ (p')-ի դիմաց հունարենը և ավեստան ունեն F (հմպտս. փ և f), իսկ Զ (k')-ի դիմաց՝ KH (x). վերջինները հայերենի շնչեղների հետ ունեն հնչույթային համապատասխանություն, բայց համարժեք չեն հնչունական (այն է՝ ձայնաբանական-արտաբերական) հատկանիշներով: Շնչեղ ձայնեղների շարք տարբերակող մեկ (հին հնդկերեն) և շնչեղ խուլերի շարք տարբերակող չորս (հին հնդկերեն, հին հայերեն, հին հունարեն, ավեստա) լեզուների դիմաց իտալյան, գերմանական, սլավոնական, բալթյան, իսթա-լուվական, թոխարական, իրանական, փոյուգական, թրակյան, իլլիրական, վենետական, ալբանական ճյուղերի մի քանի տասնյակի հասնող լեզուներն են, որոնք ունեն հպականների միայն երկու շարք: Հետևաբար, *որքան էլ տեսականորեն չբացատրվի քառաշարք համակարգի քայքայման վարկածը (այսինքն՝ էլակետային հնդեվրոպականին մոտ համարվի հնդկականը), այնուամենայնիվ գործնականում ավելի տրամաբանական է (դրա օգտին են վկայում նաև տիպաբանական գուգահեռները), որ էլակետային է եղել երկշարք համակարգը, իսկ ձայնեղների և խուլերի շնչեղ կարգերը զարգացել են կամ կոկորդային հնչյունների, մասնավորապես՝ հ-ի ներգործությամբ¹, կամ էլ դրանք հնչույթային այլ համակարգեր ունեցող ոչ հնդեվրոպական լեզուների հետ խորքային փոխազդեցությունների (= փոխներթափանցումների) արդյունք են և զարգացել են հ.-ե. լեզվական ընդհանրությունից անջատվելուց հետո՝ այդ լեզուների ինքնուրույն պատմության ընթացքում²: Կարծում ենք՝ առավել իրատեսական կլինի հ.-ե. նախալեզվի համար կանխադրել երկու շարքի հպական հնչույթներ՝ յուրաքանչյուրը հնչյունների երկուական կարգերով: Պայմանականորեն դրանք կարելի է արտահայտել (I) B^h, G^h, D^h և (II) P^h, K^h, T^h շարքերի տեսքով: Շարքերից առաջինը կխորհրդանշի bh/b, gh/g, dh/d ձայնեղների, երկրորդը՝ ph/p, th/t, kh/k խուլերի հնչունական դասերը, որոնցում համապատասխան շնչեղ և պարզ հնչյունները միևնույն հնչույթի համակցային (комбинаторный) տարբերակներն են: Հպականների այս դրությունը կանխադրելի է ընդհանուր հնդեվրոպական փուլի համար³:*

¹ Վ. Իվանովը շնչեղ խուլերի առաջացումը բացատրել է հին հայերենում հ-ի գոյությամբ (տե՛ս **Иванов Вяч. Вс.**, Об исследовании древнеармянской фонологической системы в ее отношении к индоевропейской, ВЯ, 1962, N 1, с. 40):

² Հին հնդկերենում շնչեղ ձայնեղների առկայությունը ոմանք բացատրել են դրավիդյան լեզուների ազդեցությամբ (դրավիդյան լեզուների հնչունական համակարգի մասին տե՛ս **Андронов М. С.**, Дравидийские языки, Языки Азии и Африки, т. II, М., 1978, с. 326-343):

³ Օ. Ս. Շիրոկովը ևս, քննության հիմք ընդունելով հայերենի և հունարենի հպականների եռաշարք համակարգերը, «ընդհանուր հնդեվրոպական դարաշրջանի համար» հպականների երկու շարք է վերականգնում, սակայն՝ 1) չնայած «կատկայինների տեսությունից» սահմանազատվելու ձգտումին (հմտ. «Աստ երևույթին, ոչ ձայնեղ երրորդ շարքի՝ հատկապես կատկայնացմամբ-ծեքականությամբ նշույթավորվածության (այսպես կոչված «կատկայինների տեսություն») գոյությունը պնդելու անհրաժեշտություն չկա. այժմ ավելի հավանական է թվում պարզապես նրա հատուկ լարվածությունը, հպման ինտենսիվությունը»: Տե՛ս **Широков О. С.**,

Ըստ այդմ՝ հպականների *ընդհանուր հնդեվրոպական լեզու>հայերեն* անցումային համակարգն ունեցել է զարգացման հետևյալ ընթացքը.

Չայնեդների/(շնչեղ ձայնեդների) կարգ Խուլերի/(շնչեղ խուլերի) կարգ

*B ^h >բ(b)	*P ^h >պ(p), փ(p')
*G ^h >գ(g)	*K ^h >կ(k), ք(k')
*D ^h >դ(d)	*T ^h >տ(t), թ(տ')

Հ.-ե. նախալեզվում հպականների երկշարք համակարգ կանխադրող սխեմայի համաձայն ոչ թե տեղի է ունեցել մի հնչույթային շարքից անցում մյուսին, այսինքն՝ «տեղաշարժ», այլ I շարքի դեպքում՝ *շնչեղության հնչունական հատկանիշի չեզոքացում և հնչույթի պարզեցում ձայնեղության տեսքով*, իսկ II շարքի դեպքում՝ *խուլերի ձեռքում շնչեղություն/ոչ շնչեղություն հատկանիշով և երկու ինքնուրույն հնչույթային կարգերի առաջացում*: Այդպիսով, ինչպես «բերել», «եղբայր» նշանակությամբ բառերի հ.-ե. նախաձևերում ավանդական հնդեվրոպաբանության կողմից վերականգնվող *b^h հնչույթի համար (հմմտ. *bher-, *bhrá'ter), այնպես էլ «ուժ», «խումու է» նշանակությամբ բառերի նախաձևերում վերականգնվող *b-ի համար (հմմտ. *belo-, *pibeti) հավասարապես կառաջարկվի հնչույթային *B^h- կաղապարը (հմմտ. *B^her-, *B^hrā'ter, *B^helo-, *piB^heti): Նշվածներից, օրինակ, *B^her-ը հայերենում տվել է *բեր-*(ել), իսկ սանսկրիտում՝ *bhar-* «բեր-(ել)». հմմտ. նան՝ ավեստա barāmi, հուն. φέρω, լատ. ferō, գոթ. baira, հն. իռլ. biur, հն. պլավ. берѣ «բերում եմ»: Այդպես նաև՝ *P^hed-/*P^hod-> հետ-ք, ոտք. հմմտ. նան՝ սնսկ. pad-, լատ. pēs, ped-is, հուն. πύς, ποδ-ός, գոթ. fōtus, հն. իսլ. fet-, *K^her-(ավլադ. *ker-)> քեր-(եմ), քեր-ծ-եմ, *K^huku->կկու (հմմտ. սնսկ. kō'ka-, հուն. κόκκυξ, -υγος, լատ. cucūlus, ռու. кукушка) և այլն: Կարծում ենք՝ հոգուտ ասվածի են վկայում նաև *p/ph, t/th* տիպի հնչույթային (սկզբնապես՝ հնչունական) հերթագայությունները (հմմտ. պոտյոտ /ptoyt/ «շրջան, դառնալը» - *վաթաթեմ* /phathathem/ «ոլորելը», - տարրա /tarra/ «մանուկ, երեխա»-թոռն /torn/, տիգ /tig/ «ձեռք, արմունկ»-թեկն /thekn/ *թիկան*-ի սեռ. իլ. «ուս, ձեռք» և այլն): Իհարկե, նշված օրինակները վերաբերում են ակնառու դեպքերին: Որոշակի դժվարություն կներկայացնի այնպիսի դեպքերի բացատրությունը, երբ առկա է, օրինակ, *K^h>հյ.ս (s) տիպի անցում (հմմտ. *K^herđ-/*K^hrd->սիրտ): Պիտի նկատի ունենալ, որ հնչունական (ավելի ճիշտ՝ հնչույթային) համապատասխանությունների ամբողջությունը, որը հաստատել են հնդեվրոպական ավանդական

Общеиндоевропейский и армянский консонантизм, Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Երևան, էջ 130)՝ նրա հայեցակարգի մոտիվացիան շոշափելիորեն մոտ է այդ տեսությանը, 2) նրա սխեմայում չհնչույթավորվածների շարքը ներկայացված է երկու կարգով, որոնք եղել են միևնույն հնչույթի «դիրքային տարբերակներ» և միասնաբար հակադրվել են նշույթավորված պակասավոր շարքին (п, т, к', к), բայց ըստ ներկայացված սխեմայի՝ այդ տարբերակներն ավելի շուտ միևնույն շարքի կրկնության, քան թե համակցային տարբերակների տպավորություն են գործում (հմմտ. նույն տեղում):

կամ ոչ ավանդական (օրինակ՝ «կատկայինների») տեսությունները, անցել է տասնամյակների, մի քանիսը՝ ավելի քան հարյուրամյա փորձաշրջան՝ հաստատվելով կամ մերժվելով այդ ընթացքում: Ու չնայած դրան՝ շատ հարցեր այսօր էլ մնում են վիճելի: Հ.-ե. հպականների՝ մեր կողմից առաջարկվող վարկածով, կարծում ենք, ավելի պարզ լուծում է ստանում, այսպես կոչված, պակասավոր (дефектный) շարքի հարցը. *այդ հարցադրումը պարզապես հանվում է ընդհանուր հնդեվրոպական փուլի համար*, որովհետև հպականների ինչպես երկշարք, այնպես էլ եռաշարք և քառաշարք համակարգերը ծագել են *ընդհանուր հնդեվրոպականի՝ շնչեղության հնչյունաբանական* հատկանիշով բնութագրվող երկշարք համակարգից: Այն նշանակություն կարող է ստանալ միայն հնդեվրոպական առաջին բարբառների ձևավորման, այսինքն՝ *հետընդհանուր հնդեվրոպական* փուլի համար, երբ բարբառներից յուրաքանչյուրի հնչյութային համակարգն սկսում էր փոփոխվել նոր իրավիճակին համապատասխան: Այդ առումով առանձնահատուկ կարևորություն պիտի տալ Գրասմանի և Բարթոլոմեի օրենքներին, որոնք բացատրում են հնդիրանական լեզուներում (առաջինը՝ նաև հունարենում) արմատի կազմում շնչեղ և պարզ հպականների բաշխվածության պատճառները:

Շնչեղության հնչյունաբանական հատկանիշը, լինելով ընդհանուր հնդեվրոպականի հպականների բնութագրական գծերից, միաժամանակ կարող է լինել հ.-ե. նախահայրենիքի տեղադրության հարցի որոշման կովաններից մեկը հոգուտ ասիական տարածաշրջանի, որովհետև միայն այդ շրջանի լեզուներում է շնչեղությունը պահպանվել իբրև հնչյութաբանական հատկանիշ: Այս փաստարկի նշանակությունն ավելի կկարևորվի, եթե նկատի ունենանք հ.-ե. լեզուները *կենտում* և *սատըմ* խմբերի բաժանելու, ըստ էության, քննություն չբռնած դրույթի խիստ պայմանականությունը: Զուգադրական ուսումնասիրությունները պարզել են, որ *կենտում* լեզու համարվող հին հունարենը ինչպես հնչյութաբանական, այնպես էլ քերականական հատկանիշներով ավելի շատ ծագումնաբանական ընդհանրություններ է ի հայտ բերում *սատըմ* լեզուներ հայերենի և հին հնդկերենի, քան *կենտում* խմբի մեջ դասվող լեզուների հետ¹: Հետևաբար հ.-ե. լեզվատարածքի բարբառային տրոհման դեպքում հունարենը կներառվի Հնդկաստանից մինչև հարավային Եվրոպա ընկած տարածություն:

¹ Ст' у Джаукян Г. Б., Сравнительная грамматика..., с. 201-205: Այս առնչությամբ Վ. Գեորգիևը մասնավորապես գրում է. «Լեզուները centum և satəm խմբերի բաժանելու մասին տեսությունը խանգարել է հնդեվրոպական լեզուների միջև ցեղակցային հարաբերությունների, հատկապես գերմանական լեզուների հետ բալթո-սլավոնական խմբի, *ինչպես նաև հայերենի (թրակերենի) և հնդիրանականի հետ հունարենի* (ընդգծումն իմն է՝ Վ. Պ.) անտարակուսելի մերձավորության ճիշտ պարզաբանմանը» (Георгиев В. И., Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, с. 54, 55-57):

V. Z. Petrosyan – *The Indo-European and Armenian Systems of Plosive Consonants*

By the middle of the 20th century in the Indo-European comparative linguistics the four-column system of the plosive consonants proposed by young grammarians, which was mostly restored according to Indo-European-Greek-Latin language material, had dominated. The detection of new languages (Tocharian, Hittite-Luvian and so on) on the one hand, and the use of typological and structural methods in comparative studies on the other, gave rise to doubts among the scientists on the reliability of four-column system. Of the numerous proposals of conceptual innovation and integrity the version of “the theory of velars” suggested by T. Gamkrelidze and V. Ivanov was notable. We think, however, that this version was not free from the one-sidedness of its predecessors.

According to the view proposed in this article: 1) when restoring the initial forms, the facts of all languages should be considered equally; 2) the system that is being restored should be as simple as possible and allow them to explain the transition from it to the systems having phonological characteristics of aspiration the same way as the systems without this feature; 3) the presence of features not peculiar to Indo-European language systems in Indo-European languages should rather be considered features obtained in the independent history of those languages and not features acquired in general Indo-European phase, even if these features are characteristic to not one but several languages. Accordingly, the following system of transition of plosives from general Indo-European > Armenian is proposed:

Category of voiced/aspirated voiced	Category of voiceless/aspirated voiceless
*B ^h >ɸ(b)	*P ^h >ɸ(p), ɸ(p')
*G ^h >q(g)	*K ^h >ɸ(k), ɸ(k')
*D ^h >ɸ(d)	*T ^h >ɸ(t), ɸ(t')

This system, although less specified of the plosives compared with the ones that have been suggested so far, has a higher degree of probability>